ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԻ

29.03.2013թ
ք. Արտաշատ

Մարզխորհրդի նիստին մասնակցում էին մարզխորհրդի 97 անդամներից 94 -ը, ՀՀ տարածքային կառավարման նախարարության ներկայացուցիչ Ա. Ադամյանը, հանրապետական գործադիր մարմինների տարածքային ծառայությունների ղեկավարներ, առողջապահական հիմնարկների տնօրեններ, մարզպետարանի պատասխանատու աշխատողներ, լրատվամիջոցների ներկայացուցիչներ:

ՕՐԱԿԱՐԳ

1. Համայնքային ենթակայության մշակութային հաստատություններում տարվող աշխատանքների վերաբերյալ:
   /Զեկ.՝ *կրթության, մշակույթի և սպորտի վարչության պետ Ա.Հակոբյան/*
2. Մարզի համայնքների 2012 թվականի տարեկան բյուջեների կատարման և 2013 թվականի համայնքների բյուջեների հաշվարկային ցուցանիշների համեմատական վերլուծությունը 2012 թվականի նկատմամբ:
   /Զեկ.՝ *ֆինանսական և սոցիալ-տնտ. զարգ. վարչության պետ Գ. Եղիազարյան/*
3. Գարնանային գյուղատնտեսական և ոռոգման սեզոնի նախապատրաստական աշխատանքների մասին:
   / Զեկ.՝ *գյուղատնտեսության և բնապահ. վարչության պետ Տ. Վիրաբյան/*

4. Հայտարարություններ՝

- Մարզի տարածքում սանիտարական միամսյակ անցկացնելու մասին:
  /քաղաքաշինության վարչության պետ՝ Ռ. Մկրտչյան/

- Համայնքների վարչական տարածքում գտնվող հատուկ պահպանվող տարածքների և հուշարձանների վերաբերյալ տեղեկատվություն ներկայացնելու մասին:

/Պատմական միջավայրերի պահպանության Արարատի մարզային ծառայության պետ/

1. Լսեցին՝

Համայնքային ենթակայության մշակութային հաստատություններում տարվող աշխատանքների վերաբերյալ վարչության պետ Ա. Հակոբյանի զեկուցումը:

/կցվում է/

Արտահայտվեց. մարզպետ Է. Բարսեղյանը:

Հանձնարարվեց.

- *համայնքների ղեկավարներին՝* ամենօրյա ուշադրության կենտրոնում պահել համայնքային ենթակայության մշակութային հաստատությունների կողմից իրականացվող աշխատանքները և մատաղ սերնդի դաստիարակության հարցը,
- *կրթության, մշակույթի և սպորտի վարչության պետ Ա. Հակոբյանին՝* մշակույթի տների, արվեստի, գեղարվեստի դպրոցների վերանորոգման խնդիրների, գրադարանային ֆոնդի թարմացման վերաբերյալ ներկայացնել առաջարկություններ:

2.Լսեցին՝

Մարզի համայնքների 2012 թվականի տարեկան բյուջեների կատարման և 2013 թվականի համայնքների բյուջեների հաշվարկային ցուցանիշների համեմատական վերլուծության մասին վարչության պետ Գ. Եղիազարյանի զեկուցումը:

/կցվում է/

Արտահայտվեցին. մարզպետ Է. Բարսեղյանը, մարզպետի տեղակալ Ս. Մինասյանը, համայնքների ղեկավարներ:

Հանձնարարվեց .

- *մարզպետի տեղակալ Ս. Մինասյանին՝* ստեղծել աշխատանքային խումբ և վերանայել համայնքների բյուջետային հատկացումները՝ եկամտային մասերի պակասեցման հետ կապված,
- *մարզպետի տեղակալ Ա. Մուրադյանին՝* Արտաշատի ՀՔԲ-ի հետ միասին քննարկել տվյալ համայնքից վաճառված փոխադրամիջոցների հաշվառումից հանելու հարցը՝ տեղական տուրքերի չափի հետ կապված,

- *Ֆին. և սոց.-տնտ. զարգացման վարչության պետ Գ. Եղիազարյանին՝* անհրաժեշտ աջակցություն ցուցաբերել համայնքների աշխատակազմերին գնումների գործընթացի կազմակերպման հարցում, անհրաժեշտության դեպքում անցկացնել սեմինարներ, խորհրդակցություններ,
- *համայնքների ղեկավարներին՝* համայնքների բյուջետային հատկացումների մասով ներկայացնել հիմնավորումներ,

3. *Լսեցին՝*

Գարնանային գյուղատնտեսական և ոռոգման սեզոնի նախապատրաստական աշխատանքների մասին վարչության պետ Տ. Վիրաբյանի զեկուցումը:

/ կցվում է/

Արտահայտվեց . մարզպետ Է. Բարսեղյանը:

Հանձնարարվեց .

- *մարզպետի տեղակալ Կ. Հակոբյանին՝* ամենօրյա ուշադրության կենտրոնում պահել մարզում ոռոգման սեզոնի նախապատրաստական աշխատանքները,
- *ՋՕԸ-երի պետերին՝* հնարավորինս արագ ավարտին հասցնել ոռոգման համակարգի նախապատրաստական աշխատանքները, մարզի համայնքներում ապահովել կանոնավոր ջրամատակարարում,
- *համայնքների ղեկավարներին՝* աջակցել ՋՕԸ-երին՝ ոռոգման ջրի վարձավճարների գանձման հարցում:

Նիստի վերջում հայտարարություններով հանդես եկան քաղաքաշինության վարչության պետ Ռ. Մկրտչյանը և պատմական միջավայրերի պահպանության Արարատի մարզային ծառայության պետ Ռ. Կարապետյանը:

Մարզխորհրդի նիստն ամփոփեց մարզպետ Է. Բարսեղյանը:

ՄԱՐԶՊԵՏ՝ Է. ԲԱՐՍԵՂՅԱՆ